ԱՐՍԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԹԱԼԱԻ ԻԲՆ ՌՈՒԶԶԻՔ ԱԼ-ԱՐՄԱՆԻՆ /1154-1161ԹԹ./՝ ՖԱԹԻՄՅԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉ

Բադր Ալ-Գամալիի վազիր նշանակմամբ Եգիպտոսում սկսվեց Ֆաթիմյան վազիրների «հայկական շրջանը» /1074-1162թթ./: Իրար հաջորդած հայազգի վազիրների ռազմական և քաղաքական բեղուն գործունեությունն իր ազդեցությունն ունեցավ Եգիպտահայ գաղութի զարգացման և բարգավաճման գործում:

Ֆաթիմյանները, որոնք հարում էին իսմայիլական հոսանքին, 909թ. իրենց պետությունը հիմնեցին Հյուսիսային Աֆրիկայում /այժմյան Թունիսում/[1]: Այս տերության հիմնադիր Ուբայդալլահն իրեն հայտարարել էր Իսմայիլից սերած իմամ, և քանի որ վերջինս սերում էր Մուհամմեդ մարգարեի դուստր Ֆաթիմայից /Ալիի կինը/, ուստի իրենց կոչեցին Ֆաթիմյաններ[2]: Նրանք 969թ. նվաճեցին Եգիպտոսը, ուր հաստատվեցին՝ հիմնելով Կահիրե մայրաքաղաքը[3]:

Եգիպտացի պատմաբան Մուհամմեդ Համդի Մինավին նշում է, որ սկսած Ազիզ խալիֆայից, երբ վազիրության պաշտոնը հստակորեն ձևավորվեց, մինչև Ֆաթիմյանների իշխանության անկումը /978-1171թթ./ Եգիպտոսում պաշտոնավարել են 65 վազիրներ, որոնցից 55-ը մուսուլման և 10-ը՝ զիմմի[4]: Իսլամադավաններից միայն 29-ը իսմայիլական էր, 6-ը՝ իմամական /չափավոր շիա/, որոնց էին նաև հայ վազիրներ Բադր Ալ-Գամալին, Աֆդալը, Սիմաղը, Թալաի իբն Ռուզզիքն ու նրա որդի Ռուզզիքը/ և 8-ը՝ սունի, իսկ մնացածներինը՝ հայտնի չէ: 10 զիմմիներից 7-ը քրիստոնյա էր, 3-ը՝ հրեա[5]:

Ֆաթիմյանների նման վերաբերմունքն այլակրոնների նկատմամբ և մանավանդ այլադավան վազիրների պաշտոնավարումը միշտ էլ հետաքրքրական երևույթ է համարվել միջնադարի պատմության համատեքստում: Մի կողմից ունենալով խիստ խայտաբղետ կրոնական և ազգային կազմ, իսկ մյուս կողմից՝ լինելով ամենասերտ առևտրական բազմակողմանի հարաբերությունների մեջ[6] Միջերկրական ավազանի /Արաբական Իսպանիա, Ֆրանսիա, իտալական քաղաքներ, Բյուզանդիա, Խաչակրաց իշխանություններ, Կիլիկիա և այլն/ և այլ պետությունների /Միջագետք, Իրան, Հայաստան/ հետ, Ֆաթիմյան տերությունն անխուսափելիորեն պետք է ճկուն քաղաքականություն վարեր՝ օգտագործելով բոլոր միջոցներն այդ համաշխարհային առևտրից առավելագույն չափով օգտվելու համար: Եգիպտացի պատմաբան Մ. Մինավին հետևյալ կերպ է բացատրում վերոնշյալ երևույթը. «Սնկասկած Ֆաթիմյանների իշխանության ներքո ընդհանրապես, ոչ իսլամադավանները, լինեն քրիստոնյա, թե հրեա, լավ վերաբերմունքի են արժանացել: Պետության բարձր պաշտոններն

իրոք տրվում էին նրանց, ովքեր անհրաժեշտ ընդունակություններ ունեին՝ առանց նկատի ունենալու կրոնական համոզմունքը: Եվ քանի որ դրամական հասույթները պետության համար կարևոր էին, խալիֆաները նախընտրեցին իրենց վազիրներին ընտրել դրամական գործերի մեջ հմուտ մարդկանց, և նրանց մեջ շատ էին զիմմիները, որոնց մի մասը նախքան վազիրի պաշտոնն ստանձնելն իսլամացվել էին, իսկ մյուս մասը մնացել էր իր կրոնին: Եվ թեպետ օրենսդիրները /իրավագետները/ թույլատրելի էին համարում, որ զիմմիները կարող էին լինել գործադիր իշխանության վազիրներ[7], բայց ոչ՝ լիազոր-վազիրներ, այդուհանդերձ Ֆաթիմյանները նույնիսկ սրանով էլ չսահմանափակվեցին և իրենց համար վերցրեցին քրիստոնյա լիազոր-վազիրներ»[8]:

Բադր Ալ-Գամալիի վազիրության շրջանից ութսուն տարի հետո Ռշտունյաց աշխարհից ևս մեկ հայ, որն այքի էր ընկել իր վարչարարական և ռազմական կարողություններով, ինչպես նաև իր բանաստեղծական տաղանդով՝ Մինիեի նահանգապետ Թալաի իբն Ռուզզիք Ալ-Արմանին, 1154թ. Աբ-Ֆայեզ խալիֆայի կողմից նշանակվեց վազիրի պաշտոնում:

Միջնադարյան աղբյուրներից հայտնի է, որ Ռուզզիքի պապն իր ընտանիքով Հայաստանից հաստատվեց Եգիպտոսում: Թալաին Ֆաթիմյան խալիֆայի պալատում ստացավ կրթություն և զինվորական պատրաստություն անցավ: Այնուհետև որոշ ժամանակ զբաղեցրեց Վերին Եգիպտոսի Մինիե նահանգի նահանգապետի պաշտոնը՝ հող նախապատրաստելով իր վազիրության համար: Սակայն 15-րդ դարի արաբ պատմիչ Մաքրիզին գրում է, որ Թալաի բին Ռուզզիքը Եգիպտոս եկավ Իրաքից և Եգիպտոսում զբաղեցրեց մի շարք բարձրաստիճան պաշտոններ՝ այդ թվում նաև վազիրի պաշտոնը[9]:

Նրա նահանգապետության շրջանում Եգիպտոսի վազիրն էր Աբբասը, որի որդի Նասրը սերտ անձնական հարաբերություններ ուներ երկրի խալիֆայի հետ: Մի անգամ, երբ Զաֆիր խալիֆան գաղտնի կերպով գտնվում էր Նասրի պալատում, երկրում լուրեր տարածվեցին նրանց կապի մասին: Այդ ամոթալի տեղեկությունները թաքցնելու նպատակով՝ Նասրը սպանեց խալիֆային և նրան թաղեց իր պալատի բակում: Հաջորդ առավոտյան, սպանության մեղադրանքն իր գավակից հեռացնելու նպատակով, Աբբասը սպանել տվեց խալիֆայի ապստամբած եղբայրներին և համախոհներին: Այնուհետև նա խալիֆա հռչակեց Զաֆիրի անչափահաս որդուն՝ Ալ-Ֆայեզին և բռնություններ իրականացրեց խալիֆայի ընտանիքի նկատմամբ[10]:

Երկրում կրկին ուժեղացավ ներքին պայքարը, որն ուղեկցվում էր արտաքին ուժգնացող սպառնալիքներով: Խաչակիրներն արդեն հայտնվել էին եգիպտոսի սահմանների մոտ: Ստեղծված պայմաններում պալատական կանայք, որոնք տեղյակ էին զարգացումներից, օգնություն խնդրեցին իբն Ռուզզիքից և իրենց նամակի հետ ծրարի մեջ դրեցին նաև իրենց վարսերից մի փունջ[11]: Անսալով իշխանուհիների խնդրանքին՝ Ռազզիքը հավաքեց իր

զինվորներին և շարժվեց դեպի Կահիրե: Աբբասն իր ընտանիքով փախավ դեպի Սիրիա, իսկ իբն Ռուզզիքը 1154թ. ստանձնեց վազիրի պաշտոնը[12]:

Վերջինս ուներ քաջ և վճռական ղեկավարի համբավ: Նա /Ռուզզիքին անվանում էին նաև Ալ-Մալիք Ալ-Սալիհ/ նաև ուժի կիրառմամբ նախ վերականգնեց երկրի ներքին խաղաղությունը, ապա վերահաստատեց քրիստոնյա փոքրամասնությունների իրավունքները: Նրա քաջալերանքով հայ առևտրականներն ու արհեստավորները դարձյալ իրենց ակտիվ մասնակցությունն ունեցան երկրի արտաքին առևտրի ավելացման ու արհեստների զարգացման գործում: Իսկ հայ զինվորականներն ու քաղաքական գործիչները բարձր պաշտոններ ստացան բանակում և պալատում: Ռուզզիքն իր հակառակորդների դիրքերը թուլացնելու և սեփական դիրքերն ամրապնդելու նպատակով, պաշտոնների նշանակեց իր երկու որդիներին, եղբորը, եղբորորդուն, քրոջորդուն և փեսային[13]: Նա արտաքին ճակատում անխնա պայքար ծավալեց խաչակիրների դեմ, սակայն վճռական հաղթանակներ չկարողացավ տանել[14]:

Թալաի բին Ռուզզիքը մոտավորապես յոթ տարի վարեց վազիրի պաշտոնը և երկիրը կառավարեց խաղաղությամբ: Նա գրեթե միանձնյա ղեկավարում էր Եգիպտոսը, քանի որ իր վազիրության շրջանում միմյանց հաջորդած Ֆայեզ և Ադիդ խալիֆաներն անչափահաս էին և հեղինակություն չունեին[15]:

Երբ 1160թ. երիտասարդ տարիքում մահացավ Ալ-Ֆայեզ խալիֆան, Թալաի իբն Ռուզզիքը նրա հինմայա զարմիկին՝ Ալ-Ադիդին /1160-1171թթ./, որը Ֆաթիմյան հարստության վերջին գահակալն էր, հռչակեց խալիֆա և իր աղջկան կնության տվեց նրան, որով և ամրապնդեց իր դիրքերը: Սակայն արդեն հաջորդ տարի հայազգի վազիրը սպանվեց: Իր խստաբարո բնավորության պատճառով նա չկարողացավ շահել պալատականների հարգանքը: Նույնիսկ հակասություններ առաջացան նրա և իր փեսայի միջև: Նրա ճնշող ազդեցությունից ազատվելու նպատակով՝ Ադիդ խալիֆան դավադրություն կազմակերպեց Ռուզզիքի դեմ, որի արդյունքում էլ վերջինս սպանվեց 1161թ.[16]:

Իր սպանությանը նախորդած գիշերն իմամական ծիսակարգի համաձայն Ռուզզիքը լվացվեց, ապա աղոթեց՝ 120 անգամ ծնկի գալով: Հետո նադուրս եկավ ձի հեծնելու, բայց ոտքը սահեց և գլխի վրա գետնին ընկավ: Նույն գիշերը նա դաժան ծեծի ենթարկվեց, որից հետո այդպես էլ ոտքի չկանգնեց ու մահացավ[17]:

Թալաի իբն Ռուզզիքն այն բացառիկ վազիրներից էր, որ զգալի տեղ էր հատկացնում երկրի կրթական և մշակութային կյանքին: Նրա նախաձեռնությամբ համալրվեց խալիֆայի պալատում գտնվող 40 սենյակ զբաղեցնող և 100 000 կտոր գրականություն պարունակող գրադարանը, 1005թ. հիմնված «Գիտելիքների տունը» /«Դար ալ-ուլում»/ վերածվեց ուսումնական հաստատության, քաջալերվեց նաև գիտական աշխատանքը[18]: Արաբ պատմաբանների վկայությամբ «Գիտելիքների տունը» իսլամական աշխարհի մեծագույն գրադա-

ռաններից էր: Ֆաթիմյան հարստության անկումից հետո գրքերի վերոնշյալ բացառիկ հավաքածուն աճուրդի հանվեց. մի մասը կողոպտվեց, իսկ մի մասն էլ ցրիվ եղավ[19]:

Թալլաի իբն Ռուզզիքը նպաստեց նաև շինարարական արվեստի զարգացմանը՝ հատկապես Բադր Ալ-Գամալիի նախաձեռնած մզկիթ-դամբարանների /մաշհադ/ կառուցման գործում: Նրա հետ է կապված Բաբ Զուայլայի հարավում 1160թ. կառուցված Սալիհ Թալլաի մզկիթ-դամբարանի կառուցումը՝ իր տեսակի մեջ եզակի մի կառույց, որն իր մնայուն տեղն ունի Եգիպտոսի իսլամական ճարտարապետության մեջ[20]: Այս մզկիթի կամարաձև ճակատն իր պայտաձև ներքնամասերի սրածայր գագաթով, կամարների նուրբ շարվածքով՝ տաշած քարերի հմուտ համադրություն է, որն իբն Թուլուն հայ շինարար վարպետի ձեռքի գործն էր: Հայ վարպետների այս աշխատանքն անմիջականորեն կրում էր հայկական եկեղեցական շինարարության ազդեցությունը[21]: Հայկական շինարարության այս ոճն ի վերջո Ֆաթիմյան ճարտարապետության մաս կազմեց:

Արվեստասեր վազիրի անվան հետ է կապված նաև Գուշի մզկիթի բարձրադիր բեմի /մինբար/ կառուցումը, որն արվեստի տեսաբանների կարծիքով «տասներկուերորդ դարի կեսերի ամենանուրբ և շքեղ փայտի վրա փորագրված աշխատանքներից մեկն է»[22]: Նշենք, որ հայ վարպետները, որոնք փորագրություններ էին անում փայտի և քարի վրա, մեծ համբավ ունեին Եգիպտոսում: Գուշի մինբարը ևս հայ վարպետների ձեռքի աշխատանքն էր:

Իբն Ռուզզիքը հատուկ հարգանք էր տածում մտավորականների հանդեպ: Նա իր պալատում ստեղծել էր գիտական մի կաճառ, որտեղ երեկոյան հավաքվում էին ակնառու մտավորականներ, պալատական, պետական և մշակութային գործիչներ՝ գրական, կրոնական և գաղափարական տարբեր խնդիրներ քննարկելու նպատակով[23]: 13-րդ դարի պատմիչ Իբն Խալլիքանը գրում է. «Թալլաի Ռուզզիքը մեծ արժանիքների տեր անձնավորություն էր՝ առատաձեռն, դյուրահաղորդ, գիտնականների նկատմամբ մեծ հարգանք տածող, ինչպես նաև ընտիր բանաստեղծություններ էր գրում»[24]:

Նա թանկարժեք նվերներ էր մատուցում հատկապես բանաստեղծներին, որոնք տարբեր շրջաններից գալիս էին վազիրին ձոներ նվիրելու նպատակով: Ռուզզիքն ինքն էլ օժտված էր բանաստեղծական տաղանդով: Նրա գրչին է պատկանում բանաստեղծությունների երկհատոր «Դիվանը»: Այս երկհատորյակի մասին տեղեկություններ չկան նաև Զիրջի բեյ Զեյդանի «Արաբական գրականության պատմություն» աշխատանքում: Բարեբախտաբար իբն Ռուզզիքի բանաստեղծություններից հատվածներ արտագրել է Իբն Խալլիքանն իր «Վեֆայաթ ալ-աայան» /«Անհետացած երևելիներ»/ պատմագրքում: Նա նաև մոլեռանդ իմամական էր: Նրա գրչին է պատկանում նաև «Համառներին պատասխանելու հեռարան» կրոնական գիրքը, որի շուրջ նա

քննարկումներ կազմակերպեց իսլամական տեսաբանների հետ[25]: Այս գիրքը պարունակում էր զրույցներ Ալի իբն Աբու Տալիբի իմամության և դրա մասին գրի առնված մարգարեական ավանդությունների վերաբերյալ:

Արաբ պատմիչ Մաքրիզին հետևյալ տեղեկություններն է հաղորդում իբն Ռուզզիքի վերաբերյալ. «Առաքինի թագավոր, իսլամադավանների ասպետ և կրոնի պաշտպան իբն Ռուզզիքն իր գործունեության սկզբնական շրջանում մի խումբ հավատացյալների հետ այցելեց Իրաքի Նաջաֆ սրբավայր՝ Ալի իբն Աբու Տալիբի դամբարան: Նա դավանում էր իմամականություն: Այդ ընթացքում Ալիի դամբարանի իմամն էր Ալ-Սաիդ իբն Մասումը: Վերջինիս այդ գիշեր երազում հայտված Ալին տեղեկացրեց, որ այցելուների մեջ էր ոմն իբն Ռուզզիքը: Նա պետք է անմիջապես մեկներ Եգիպտոս, քանի որ այնտեղ նրան մեծ գործեր էին սպասվում՝ այդ թվում նաև երկրի վարչապետությունը: Իբն Մասումը պատմեց իբն Ռուզզիքին իր երազի մասին: Վերջինս անմիջապես վերադարձավ Եգիպտոս, որտեղ զբաղեցրեց մի շարք պաշտոններ: Ավելի ուշ նրան վազիրության խիլա /վազիրի թիկնոց/ տրվեց և հետևյալ տիտղոսները՝ առաքինի թագավոր, մուսուլմանների ասպետ և կրոնի պաշտպան»[26]:

Մաքրիզին հետևյալ տեղեկություններն է հաղորդում Ռուզզիքի Կահիրե հաղթական մուտքի վերաբերյալ: «Նա /Թալաի իբն Ռուզզիքը-Ա.Ա./ իր զորքով մտավ Կահիրե: Աբբասը, Օսաման և Նասրը փախան: Սև հագուստներով, ամբողջովին սև դրոշակները պարզած, որոնց վրա ամրացված էին կանանց մազափնջերը, Թալաի իբն Ռուզզիքը հաղթական մտավ Կահիրե: Այս դեպքերից 15 տարի անց, երբ մահացավ Ադիդ խալիֆան և Սալլահ Ադ-Դինը դարձավ Եգիպտոսի բացարձակ տիրակալը, Աբբասյանների սև դրոշակը Բաղդադից մտավ Կահիրե:

Իբրև առաջին քայլ՝ նա ոտքով քայլեց դեպի Նասրի պալատը: Նա այնտեղից դուրս բերեց Զաֆիրի և նրա ծառայի դիակները և կազմակերպեց նրանց հուղարկավորությունը, որի ընթացքում աղոթք կարդաց նրա որդին՝ Ֆայեզը: Զաֆիրը թաղվեց խալիֆայի պալատի դամբարանում»[27]:

Իբն Ռուզզիքին պատկանող ապարանքների, կառուցած մզկիթների և նրա անունը կրող փողոցների և թաղերի մասին Մաքրիզին իր «Խիտատ» աշխատանքում հետևյալ տեղեկություններն է հաղորդում. «Դար ալ-սալահ պալատում, որ գտնվում էր բանտի մոտակայքում՝ Դայլամ թաղամասում, մինչև վազիրի պաշտոնը ստանձնելն ապրում էր Թալաի բին Ռուզզիքը: Պալատը նա կառուցեց 1152-1153թթ.[28]: Բելբեյսի աղյուսե ամրությունները ևս կառուցել է Ալ-Մելիք Աս-Սալիհ Թալաի բին Ռուզզեքը 1159-1160թթ.[29]: Նրա անունով էր կոչվում Հարաթ ալ-սալիհիե թաղամասը, որը կազմված էր երկու՝ մեծ և փոքր թաղերից: Նրանք գտնվում էին Հուսեյնի դամբարանի, Այդամուրի հրապարակի և Բարգիեի միջև: Այն իր ժամանակի մեծ թաղերից մեկն էր[30]: Ռուզզիքի պալատի մոտակայքում էր գտնվում Խավխեթ ալ-սալիհիեն /Սալիհի դռնակը կամ անց-

քը/: Սկզբնական փուլում այս դռնակը կոչվում էր Բոհթիքինի դռնակ, սակայն ավելի ուշ այն անվանվեց Ռուզգիքի անունով, քանի որ գտնվում էր այն պալատի մոտ, որտեղ մինչև Զաֆիրի վազիր դառնալը բնակվում էր Ռուզգիքը[31]:

Իբն Աբդ Ալ-Զահիրը գրում է, որ երբ խաչակիրների հարձակման վտանգն ուժեղացավ, որոշում կայացվեց իմամ Հուսեյնի դամբարանը տեղափոխելու վերաբերյալ: Իբն Ռուզգիքը կառուցեց մի մզկիթ՝ Հուսեյնին այնտեղ թաղելու նպատակով: Սակայն, երբ այն արդեն պատրաստ էր, խալիֆան թույլ չտվեց նրան այնտեղ թաղել: Հրամայվեց նրան թաղել փառավոր պալատներից մեկում և կառուցվեց ներկայումս գոյություն ունեցող դամբարանը, որտեղ էլ և Հուսեյնը թաղվեց:

Պատմում են, որ երբ Սալիհը մահամերձ էր, նա իր մոտ հրավիրեց իր զավակներին և ասաց, որ զղջում է երեք արարքի համար. առաջինը՝ Կահիրեի դռների մոտ մզկիթի կառուցումն էր, ինչը դյուրացրեց քաղաքի վրա հարձակումը, երկրորդն այն էր, որ բանակով Բելբեյս հասավ: Այս ընթացքում մեծաքանակ դրամ ծախսվեց /100 հազար դինար/: Փախարենը պետք էր արշավել դեպի Սիրիա, ապա գրավել Երուսաղեմը և պարտության մատնել խաչակիրներին»[32]:

«Մասջիդ Ալ-Հալաբին մզկիթը կառուցվեց այն վայրում, որտեղ վազիր Աբբասի որդին սպանեց և թաղեց Զաֆիր խալիֆային: Երբ Ռազգիքը ստանձնեց վազիրի պաշտոնը, նա Զաֆիրի մարմինը տեղափոխեց դղյակի դամբարան: Սպանված վայրում Ռուզգիքի կառուցած մզկիթը Կահիրեի ամենագեղեցիկ մզկիթներից մեկն էր»[33]:

«Նա վերանորոգեց Մեծ Գարաֆայի մզկիթը, որի մոտ գտնվում էր նաև Ռուզգիքի կառուցած Մեսջիդ Ալ-Սալիհ մզկիթը: Այն իր վերնամասում ուներ դիտարաններ»[34]:

Ֆաթիմյանների պատմության մեջ Մուսթանսիր խալիֆայի օրոք սկիզբ դրվեց «մեծ վազիրների» ժամանակաշրջանին, որի ընթացքում լայնածավալ կայսրությունը կառավարում էին մեծ մասամբ հայ վազիրները[35], այդ թվում նաև ռազմաքաղաքական և մտավորական գործիչ Թալաի իբն Ռուզգիքը: Նրանց գործունեությունն ապացույցն է այն վճռական դերի, որը խաղացել են հայերը Մերձավոր և Միջին Արևելքի քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ֆաթիմյան Եգիպտոսի մասին մանրամասն տես՝ Семенова Л.А. , Из фатимидского Египта, Москва 1974.

2. Իսմայիլականությունը ծայրահեղ շիական ուղղություն է, որը ձևավորվել է Աբբասյան խալիֆայության շրջանում, ութերորդ դարում եւ որի հիմքում ընկած է իմամության և սոցիալական արդարության վրա հիմնված իսլամական պետության ստեղծման գաղափարը: Իսմայիլականների համոզմամբ՝ իմամությունը պետք է փոխանցվեր իմամ

Զաաֆար Ան-Սադիկի որդիներից Իսմայիլին և նրա սերունդներին: Մանրամասն տե՛ս И.П.Петрушевский, Ислам в Иране Л., 1966.
3. Ph.Hitti, History of the Arabs, London, 1958, pp. 617-620.
4. Զիմմի էին համարվում ոչ իսլամադավանները, որոնք գտնվում էին իսլամի հովանավորյալների կարգավիճակում:
5. M. N. Minawi, Al-Wizara w al-wizara fi-l-asr al-fatimi, Al-Kahira, 1970, pp. 297-302.
6. И.П.Петрушевский, в кн. История стран зарубежной Азии в средние века, с. 367-371. M. Canard, Fatimides, Encyclopeadia de l'Islam, Nouv. ed., II, p. 880-881.
7. А. Мец, Мусульманский ренесанс, М., 1966, с. 54.
8. M. N. Minawi, նշվ. աշխ., էջ 38:
9.Գեորգ Մըսըլեան, Ականաւոր հայեր Եգիպտոսի մէջ, Գահիրէ, 1947, էջ 87:
10. Արշակ Ալպոյաճյան, Արաբական Միացյալ Հանրապետութեան Եգիպտոսի նախանգը և հայերը, Գահիրէ, 1960, էջ 33:
11. Իսլամական ավանդույթի համաձայն՝ անարդարության դեմ բողոքի և օգնություն խնդրելու դեպքում իսլամադավան կանայք իրենց վարսերից դնում էին խնդրագրի ծրարի մեջ:
12. Սոնա Զէյթլեան, Հայութեան ներդրումը վաղ միջնադարեան եւ արդի Եգիպտոսի պատմության մէջ, Կանադա, 2004, էջ 12:
13. Seta B. Dadoyan, The Fatimid Armenians: Cultural and Political Interaction in the Near East, Brill, 1997, p. 160.
14.Թալաի Ռուզգիքի թոռնուհին ամուսնացած էր Ալ-Գամալի գերդաստանի երկրորդ վազիր Ալ-Աֆդալի հետ: Այդպիսով Ֆաթիմյան խալիֆայության «հայկական շրջանի» առաջին և վերջին գերդաստանները միմյանց հետ կապված էին խնամիական կապերով:
15.Սոնա Զէյթլեան, նշվ. աշխ., էջ 12:
16.Նույն տեղում:
17.Իբն Մաքրիզի, Ալ-Խիտատ, 15-րդ դար, հ. դ, էջ 81-83: Տե՛ս Գեորգ Մըսըլեան, Ականաւոր հայեր Եգիպտոսի մէջ, էջ 89-91:
18.Gaston Wiet, Cairo: City of Art and Commerce, translated by Seymour Feiler, University of Oklahoma Press, 1964, p. 30-32.
19.Նույն տեղում:
20.K. A. Creswell, The Muslim Architecture of Egypt, Oxford, 1952, Vol. 1, p. 287.
21.Ali Wijdan, The Arab Contribution to Islamic Art (from the Seventh to the Fifteenth Centuries), American University of Cairo Press, 1999, p. 96.
22.Irene Beirman, Art and Architecture in the Medieval Period, in The Cambridge History of Egypt, Vol. 1, Islamic Egypt 640-1517, ed. Petry Carl F., Cambridge University Press, 1998, p. 365.
23.Oleg Grabar, The Architecture of the Middle Eastern City from Past to Present: The Case of the Mosque, in Ira M. Lapidus ed. Middle Eastern Cities, los Angeles, 1969, pp. 42-43.
24.Իբն Խալլիքան, Անհետացած երեւելիներ /Վէֆայաթ էլ-ասյան/, թարգմ. Գ. Մըսըլեան, Գահիրէ, 1935, էջ 184:
25.Նույն տեղում:
26. Իբն Մաքրիզի, Ալ-Խիտատ, հ. գ, էջ 48, մեջբերումն ըստ Գեորգ Մըսըլեան, Ականաւոր հայեր Եգիպտոսի մէջ, էջ 92:
27.Նույն տեղում:
28.Նույն տեղում, էջ 92:
29. Նույն տեղում:
30. Նույն տեղում, էջ 93:
31.Իբն Նույն տեղում:
32. Նույն տեղում, էջ 94:
33. Նույն տեղում:
34. Նույն տեղում:
35.Արամ Տեր-Ղևոնդյան, Վահրամ Պահլավունին Ֆաթիմյան խալիֆայության վազիր, Հոդվածների ժողովածու, Երևան, 2003, էջ 541: